ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

2010 թվականի գիտական և գիտակազմակերպական ընդհանուր արդյունքներին էր նվիրված ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովը, որին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, *ՀՀ նախարարներ, Ազգային ժողովի պատգամավորներ, բարձրաստիճան հյուրեր, տարբեր երկրներից ժամանած ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամները:*

Ժողովը մեկնարկեց ապրիլի 14-ին՝ ԳԱԱ գիտական բաժանմունքներում տարվա արդյունքների ամփոփումով:

Շահագրգիռ քննարկումներին մասնակցեցին նաև ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ, իսկ մի շարք ԳԱԱ արտասահմանյան անդամներ հանդես եկան հետաքրքիր զեկուցումներով:

Ապրիլի 15-ին ԳԱԱ նիստերի դահլիճում գումարվեց տարեկան ընդհանուր հաշվետու ժողովը: Բացելով այն՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը *խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հաշվետու տարում կյանքից հեռացած ակադեմիկոսներ Էմիլ Գաբրիելյանի, Ստեփան Մադոյանի, Մելիստ Մովսիսյանի, թղթակից անդամ Նազարեթ Թովմասյանի հիշատակը:*

Զայնը տրվում է Հայ առաքելական եկեղեցու պատվիրակ՝ Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանին*: Սրբազանը ժողովի մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հայրապետական օրհնությունը և մաղթանքները՝ ի փառս հայ գիտության զարգացման և հաջողություն ժողովի աշխատանքների:*

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 2010 թվականի գիտական գործունեության ընդհանուր արդյունքների մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը*:*

Գիտությունների ազգային ակադեմիայի 2010 թվականի գիտակազմակերպական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար Արամ Շահինյանը*:*

Զեկուցումներից հետո ծավալվեց մտքերի աշխույժ և շահագրգիռ փոխանակություն: Ելույթ ունեցան ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն Արամ Պապոյանը*, ԼՂՀ գիտական կենտրոնի տնօրեն* Սեմյոն Բաբայանը*, ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն* Աշոտ Մելքոնյանը*, ԳԱԱ ակադեմիկոս* Արմեն Գալոյանը*, ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն* Վլադիմիր Սահակյանը*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ* Ռաֆիկ Եդոյանը*, փորձագիտության ազգային կենտրոնի տնօրեն* Արտաշես Ջավադյանը*:*

Ժողովի մասնակիցները մեծ ուշադրությամբ լսեցին ՌԳԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պետական էրմիտաժի տնօրեն Միխայիլ Պիոտրովսկու «Հանրագիտական թանգարան 21-րդ դարում», ՀՀ ԳԱԱ հիմնարար գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանի *«Դեպի տեղեկատվական հասարակություն. ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը ՀՀ ԳԱԱ գիտական գրադարանում» բովանդակալից զեկուցումները:*

«Գիտություն», ապրիլ, - 4, 2011 թ.